Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

# Զանգվածային լրատվության միջոցներով թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և թմրամիջոցներին առնչվող այլ հրապարակումների մշտադիտարկման արդյունքները 2016 թվականին

Վանաձոր

2017 թ.

**Հեղինակային խումբ**

Խմբագրեց՝ Արթուր Սաքունց

Կազմեց՝ Մարիետա Թեմուրյան

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունությունը Հայաստանում ժողովրդավարության և մարդու իրավունքների մարտահրավերների լույսի ներքո» ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ՝ N 19471:

Սույն ուսումնասիրության մեջ տեղ գտած տեսակետների հեղինակը ՀՔԱ Վանաձորի գրասենյակն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Ուսումնասիրության բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին, այն արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չի ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները:

## Բովանդակություն

Հապավումների ցանկ ..... 4

Նախաբան ..... 5

Մեթոդաբանությունը ..... 5

Հրապարակումների աղբյուրները ..... 7

Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա նրանց ազդեցությունը ..... 13

Հրապարակումների բնույթը ..... 13

Թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա հրապարակումների ունեցած ազդեցությունը ..... 14

Թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա հրապարակումների ունեցած ազդեցությունը ..... 16

Հրապարակված նյութերում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը .. 17

Ամփոփում ..... 20

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վերաբերյալ ..... 22

## Հապավումների ցանկ

ԶԼՄ – Զանգվածային լրատվության միջոց

ՀԱՊԿ – Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀՔԱ – Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա

ԶԻԱՀ - Զեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ

ՄԻԱՎ - Մարդու իմունային անբավարարության վիրուս

ՔԿՀ – Քրեակատարողական հիմնարկ

## Նախաբան

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի գործունեության ուղղություններից է թմրամիջոց գործածող անձանց իրավունքների պաշտպանությունը:

Կազմակերպությունը 2011թ.-ից պարբերաբար դիտարկում է Հայաստանի Հանրապետությունում զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվող նյութերը՝ հավաքագրելով և վերլուծելով թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամիջոցների վերաբերյալ տեղեկությունները: Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մշտադիտարկումը նպատակ ունի բացահայտել թմրամիջոց գործածող անձանց իրավունքների պաշտպանության վիճակը, պետության ու հասարակության վերաբերմունքը թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ՝ ըստ այդ հրապարակումների:

Սույն տեղեկանքում համեմատականներ է անցկացվել նախորդ տարիներին իրականացված նմանատիպ մշտադիտարկման արդյունքների հետ:

2016 թ., ինչպես և 2015 թ., մշտադիտարկվել է ինտերնետային 15 էջ, որոնցից 3-ը եղել են պետական մարմինների պաշտոնական էջեր՝ police.am, genproc.am, moh.am, 12-ը՝ զանգվածային լրատվության միջոցների էջեր՝ news.am, a1plus.am, lragir.am, 168.am, 7or.am, slaq.am, ilur.am, galatv.am, armlur.am, 1in.am, operativ.am, hhpress.am:

2016 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում հավաքագրվել և վերլուծության է ենթարկվել թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը վերաբերող ընդհանուր թվով 1505 հրապակում:

## Մեթոդաբանությունը

Հավաքագրված նյութերը, ինչպես և 2015թ., դասակարգվել են ըստ տեղեկատվության տարածման աղբյուրների, բովանդակության, ինչպես նաև հանրային վերաբերմունքի ձևավորման վրա նրանց ունեցած ազդեցության:

Ըստ տեղեկատվության տարածման աղբյուրների՝ նյութերը դասակարգվել են հետևյալ խմբերի՝

- *պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով հրապարակված նյութեր*,
- *զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութեր*:

Պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով և զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութերը ևս խմբավորվել են ըստ պետական մարմինների, կազմակերպությունների և մարդկանց խմբերի:

Հրապարակումները դասակարգվել են ըստ հետևյալ խմբերի՝

- քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ (*քրեական հետապնդում, բերման ենթարկում, ձերբակալում, նախաքննություն, դատաքննություն, պատժի նշանակում, թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի ու պատասխանատվության միջոցների կիրառում),*
- ընդհանուր բնույթի տեղեկատվական նյութեր *(վիճակագրական տվյալներ ներկայացնող, թմրամիջոցների ազդեցության, կիրառության, գործածման, հետազոտությունների, ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում պետական քաղաքականության վերաբերյալ նյութեր)*:

Քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ նյութերը խմբավորվել են ըստ հետևյալ թեմաների՝

- թմրամիջոց գործածող անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ նյութեր, որոնք չեն վերաբերում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը,
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ նյութեր, որոնցում մատնանշվել են պաշտոնատար անձինք և քաղաքացիներ,
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ նյութեր, որոնցում հիմնականում տեղեկություններ են պարունակվել թմրամիջոցի կամ թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող խմբերի հայտնաբերման մասին՝ առանց կոնկրետ անձանց կամ մարդկանց խմբերի մատնանշման,
- քաղաքացիների նկատմամբ քրեական պատասխանատվության, քրեական հետապնդման և քրեադատավարական այլ գործողությունների մասին նյութեր:

Հրապարակված նյութերը գնահատվել են թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության տեսանկյունից՝

- դրական վերաբերմունք ձևավորող,
- բացասական վերաբերմունք ձևավորող,
- չեզոք բնույթի նյութեր (դրական կամ բացասական վերաբերմունք չեն ձևավորում) և

թմրամիջոցների և նրանց գործածման նկատմամբ ազդեցության տեսանկյունից՝

- բացասական վերաբերմունք ձևավորող *(թմրամիջոցների գործածման բացասական հետևանքների մասին տեղեկություններ պարունակող նյութեր)*,
- ոչ բացասական վերաբերմունք ձևավորող *(թմրամիջոցների գործածումը խրախուսող նյութեր)*,
- չեզոք բնույթի նյութեր *(նյութեր, որոնք չեն անդրադառնում թմրամիջոցների գործածման բացասական հետևանքներին, չեն խրախուսում դրանց գործածումը)*:

Առանձնացվել են նաև այն նյութերը, որոնք տեղեկատվություն են պարունակում մարդու իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ, ինչպես նաև այն նյութերը, որոնք

պարունակում են անձին նույնականացնող անձնական տվյալներ՝ խախտելով անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը:

## Հրապարակումների աղբյուրները

2016 թ. մշտադիտարկված ինտերնետային 15 էջերից թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը վերաբերող ընդհանուր թվով 1505 նյութերից[1] 248-ը հրապարակվել է պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով, 1257-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

ՀՀ ոստիկանության կողմից հրապարակվել է 240 նյութ, ՀՀ դատախազության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ 4-ական նյութ (տե՛ս աղյուսակ 1):

**Աղյուսակ 1**

**Հրապարակումների դասակարգումը՝ ըստ տեղեկատվության տարածման աղբյուրների**

| N | Տեղեկատվության տարածման աղբյուրը | 2015 թ. | | 2016 թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը |
| 1 | Պետական մարմնի պաշտոնական ինտերնետային էջ, որից | 242 | 15.8 | 248 | 16.5 | 490 | 16.2 |
| | *ՀՀ ոստիկանություն*[2] | *240* | *15.7* | *240* | *15.9* | | |
| | *ՀՀ առողջապահության նախարարություն* | *1* | *0.01* | *4* | *0.3* | | |
| | *ՀՀ դատախազություն* | *1* | *0.01* | *4* | *0.3* | | |
| 2 | Զանգվածային լրատվության միջոց | 1285 | 84.2 | 1257 | 83.5 | 2542 | 83.8 |
| **Ընդամենը** | | **1527**[3] | **100** | **1505** | **100** | **3032** | **100** |

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, 2016 թ. թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամիջոցներին առհասարակ առնչվող հրապարակումները 2015 թ. համեմատությամբ նվազել են (2015թ. մայիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում հավաքագրվել է 1527 հրապարակում, 2016 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում՝ 1505): Միևնույն ժամանակ աճել է պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով տարածվող նյութերի թիվը, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հրապարակումների թիվը:

---

[1] *Հավաքագրված 1505 հրապարակումները վերաբերել են 533 դեպքի, այսինքն՝ միևնույն անձի կամ դեպքի վերաբերյալ եղել են մեկ կամ մեկից ավելի հրապարակումներ:*

[2] *ՀՀ ոստիկանության ինտերնետային էջի լրահոսում հրապարակվող «Օպերատիվ իրավիճակը հանրապետությունում» հոդվածաշարը, «02» և «Հերթապահ մաս» հաղորդաշարերը չեն հավաքագրվել և վերլուծվել, քանի որ պարունակել են լրահոսում հրապարակումների միևնույն տեղեկատվությունը:*

[3] *2015 թ. ուսումնասիրվել է մայիս-դեկտեմբեր ամիսները*

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տարածվել է 4 հրապարակում, որոնք վերաբերել են.

1. ՀԱՊԿ անդամ երկրների գլխավոր թմրաբանների հանդիպմանը. հրապարակման մեջ ընդգծվում է թմրամիջոցների գործածումը նվազեցնելու, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում առողջապահական ծառայությունների կարևոր դերը,
2. ՀՀ ոստիկանության համակարգի աշխատակիցների համար դասընթացների կազմակերպմանը, որի նպատակն էր բարձրացնել մարդու իրավունքների մասին վերջիններիս տեղեկացվածությունը և զարգացնելու նրանց աշխատանքային հմտությունները, այդ թվում՝ թմրամիջոց գործածող անձանց հետ առնչվելու ժամանակ,
3. թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրվան. հրապարակման մեջ նշվում է առանց թմրամիջոցների հասարակություն ստեղծելու կարևորությունը,
4. ՀՀ առողջապահության նախարարի և ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի Հայաստանի ծրագրերի պորտֆոլիո ղեկավար Վալերիա Գրիշեչկինայի հանդիպմանը. ՀՀ առողջապահության նախարարը անդրադարձել է ՄԻԱՎ-ի և արյունային այլ վարակների կանխարգելման նպատակով ներարկային թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում վնասի նվազեցմանն ուղղված միջոցառումների կարևորությանը, իսկ Վալերիա Գրիշեչկինան՝ Հայաստանի Հանրապետությունում գործող մեթադոնային փոխարինող բուժման կլինիկական ուղեցույցի՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցներին համապատասխան վերանայման անհրաժեշտության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետային էջով տարածված նյութերը վերաբերել են պաշտոնական հանդիպումներին, որոնցում ներկայացվել են նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին տեղեկություններ:

ՀՀ ոստիկանության կողմից հրապարակվել են 15 նյութեր, որոնք անդրադարձել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում տարբեր պաշտոնական հանդիպումներին, 2 հրապարակում («ամփոփ տեղեկատվություն») է եղել 2015 թ. և 2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի վիճակի մասին»: ՀՀ ոստիկանության ինտերներտային էջով ևս 2 հրապարակումները վերաբերել են ոստիկանության աշխատակիցների վերապատրաստումներին, հրապարակումներից մեկն անդրադարձել է անչափահաս անձանց կողմից թմրամիջոց օգտագործելու դեպքերի նվազմանը, մեկը՝ թմրամիջոցների անօրինական շրջանառության բնագավառում առկա խնդիրներին և ձեռքբերումներին, ևս մեկը՝ թմրամիջոցների անօրինական շրջանառության հակազդման աշխատանքների արմատական բարելավման առաջնահերթությանը, 3 հրապարակման մեջ ներկայացվել է վիճակագրություն թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում հայտնաբերված դեպքերի վերաբերյալ: Հրապարակվել է նաև նյութ, որն անդրադարձել է

թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար կալանավորված անձանց կողմից այլ հանցագործության կատարմանը։

ՀՀ ոստիկանության ինտերնետային էջով հրապարակված նյութերից մեկն անդրադարձել է 2016 թ. հուլիսի 17-ին «Սասնա ծռեր» խմբավորման կողմից զենքի գործադրմամբ ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի շենքը գրաված խմբի անդամներին՝ ոմանց ՀՀ ոստիկանությունը ներկայացրել էր նաև որպես «թմրամոլության հակում ունեցող» անձինք, ինչը քաղաքացիական հասարակության կողմից քննադատվել էր զանգվածային լրատվության միջոցներով տարածված հրապարակումներում։

ՀՀ ոստիկանության ինտերնետային էջով մյուս հրապարակումներով տեղեկատվություն է տրամադրվել թմրամիջոցների և թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող անհատների, մարդկանց խմբերի հայտնաբերման մասին։

Զանգվածային լրատվության միջոցներով տարածված 1257 հրապարակումներից 628-ում տեղեկատվությունը տրամադրվել է Հայաստանի Հանրապետությունում գործող պետական մարմինների կողմից կամ տարածվել է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային էջով արդեն իսկ հրապարակված նյութը և միայն 629 հրապարակումներում է տեղեկատվությունը ստացվել այլ աղբյուրներից (զանգվածային լրատվության միջոցներով տարածված հրապարակումների դասակարգումը ներկայացված է աղյուսակ 2-ում, էջ 10)։

Զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումներում ևս թե՛ 2015 թ. և թե՛ 2016 թ. որպես տեղեկատվության աղբյուր առավել շատ հանդիսացել է ՀՀ ոստիկանությունը։ Ընդհանուր առմամբ 2015-2016 թթ. ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվությամբ հրապակումների թիվը 1115 է և կազմում է ընդհանուր հրապարակումների 73.5 տոկոսը։

Այս թիվը մեծամասամբ պայմանավորված է ՀՀ ոստիկանության ինտերնետային էջում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ հրապարակումների մեծ թվով և զանգվածային լրատվության միջոցների կողմից այդ նույն տեղեկատվության տարածմամբ։

Ինչպես 2015 թ., այնպես էլ 2016 թ. տեղեկատվության հիմնական աղբյուրներ են հանդիսացել նաև ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ քննչական կոմիտեն։ 2016 թ. համեմատաբար մեծ թիվ են կազմել նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումները։

**Աղյուսակ 2**

**Զանգվածային լրատվության միջոցներով տարածված հրապարակումների դասակարգումը՝ ըստ ՀՀ-ում գործող պետական մարմիններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության**

| N | Պետական մարմիններ (աղբյուրներ) | 2015 թ. | | 2016 թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը |
| 1 | Ոստիկանություն | 682 | 77 | 433 | 68.6 | 1115 | 73.5 |
| 2 | Արդարադատության նախարարություն | 76 | 8.6 | 34 | 5.4 | 110 | 7.3 |
| | *Այդ թվում՝* | | | | | | |
| | Քրեակատարողական վարչություն | 75 | 8.4 | 33 | 5.2 | 108 | 7.1 |
| 3 | Հատուկ քննչական ծառայություն | 50 | 5.6 | 48 | 7.6 | 98 | 6.5 |
| 4 | Քննչական կոմիտե | 31 | 3.5 | 47 | 7.4 | 78 | 5.1 |
| 5 | Պետական եկամուտների կոմիտե | 0 | 0 | 32 | 5.1 | 32 | 2.1 |
| 6 | Ֆինանսների նախարարություն | 20 | 2.3 | 0 | 0 | 20 | 1.3 |
| 7 | Առողջապահության նախարարություն | 6 | 0.7 | 17 | 2.7 | 23 | 1.5 |
| | *Այդ թվում՝* | | | | | | |
| | Նարկոլոգիական բուժհաստատություն | 5 | 0.6 | 1 | 0.2 | 6 | 0.4 |
| | ՁԻԱՀ-ի կանխարգելման կենտրոն | 0 | 0 | 1 | 0.2 | 1 | 0.1 |
| | Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն | 0 | 0 | 3 | 0.5 | 3 | 0.2 |
| 8 | Ազգային անվտանգության ծառայություն | 10 | 1.1 | 1 | 0.2 | 11 | 0.7 |
| 9 | Արտաքին գործերի նախարարություն | 0 | 0 | 6 | 0.9 | 6 | 0.4 |
| 10 | Կառավարություն | 1 | 0.1 | 5 | 0.8 | 6 | 0.4 |
| 11 | Դատախազություն | 1 | 0.1 | 3 | 0.5 | 4 | 0.3 |
| 12 | Այլ | 9 | 1 | 5 | 0.8 | 14 | 0.9 |
| **Ընդամենը** | | **886** | **100** | **631** | **100** | **1517** | **100** |
| **N** | **Մասնավոր կազմակերպություններ և/կամ ոչ պաշտոնատար անձինք** | **Թիվը** | **Տոկոսը** | **Թիվը** | **Տոկոսը** | **Թիվը** | **Տոկոսը** |
| 1 | Թմրամիջոց գործածող անձանց հարազատներ և/կամ քաղաքացիներ | 9 | 2.2 | 5 | 0.8 | 14 | 1.3 |
| 2 | Թմրամիջոց գործածող անձինք և թմրաբաններ | 5 | 1.2 | 2 | 0.3 | 7 | 0.7 |
| 3 | Փաստաբաններ և/կամ իրավաբաններ | 4 | 1 | 6 | 0.9 | 10 | 1 |
| 4 | Հասարակական և/կամ միջազգային կազմակերպություն | 0 | 0 | 10 | 1.6 | 10 | 1 |
| 5 | Հոգեբան | 0 | 0 | 2 | 0.3 | 2 | 0.2 |
| 6 | ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ | 2 | 0.5 | 0 | 0 | 2 | 0.2 |
| 7 | ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ | 0 | 0 | 1 | 0.2 | 1 | 0.1 |
| 8 | ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմին | 0 | 0 | 1 | 0.2 | 1 | 0.1 |
| 9 | Հայկական կարմիր խաչի ընկերություն | 1 | 0.3 | 0 | 0 | 1 | 0.1 |
| 10 | Այլ | 0 | 0 | 6 | 0.9 | 6 | 0.6 |
| 11 | *ԶԼՄ* | *386* | *94.8* | *596* | *94.8* | *982* | *94.7* |
| **Ընդամենը** | | **407** | **100** | **629** | **100** | **1036** | **100** |
| **Ընդամենը** | | **1293*** | | **1260**** | | **2253** | |

* *Զանգվածային լրատվության միջոցներով 2015թ. հրապարակումների թիվը 1285 է եղել, 1293 թիվը ստացվել է 6 նյութերում և՛ պետական մարմիններից, և՛ այլ աղբյուրներից տեղեկատվության առկայությամբ, միաժամանակ նյութերից երկուսը պարունակել են ինչպես ՀՀ ոստիկանության, այնպես էլ ՀՀ ԱՆ նարկոլոգիական բուժհաստատության կողմից տրամադրված տեղեկատվությունը:*

*** 2016թ. հրապարակումների թիվը 1257 է, 1260 թիվը ստացվել է 3 նյութերում միաժամանակ և՛ պետական մարմիններից, և՛ այլ աղբյուրներից տեղեկատվության առկայությամբ:*

Պետք է նշել, որ ինչպես ՀՀ ոստիկանության կողմից, այնպես էլ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումները հիմնականում վերաբերել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում այդ մարմինների կողմից իրականացված գործողություններին։

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա 2016 թ. զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումները 2015 թ. համեմատությամբ աճել են ավելի քան 2 անգամ (ընդ որում 2015թ. ուսումնասիրությունը ներառել է մայիս-դեկտեմբեր ամիսները, իսկ 2016 թ.՝ հունվար-դեկտեմբեր)։

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա 2016 թ. 17 հրապարակում է եղել, որոնք վերաբերել են՝

- Երևանի Բաղրամյան պողոտայում ինքնահրկիզված Քաջիկ Գրիգորյանին, որի վերաբերյալ Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոնի տնօրենը լրատվամիջոցին տրամադրել էր անձի առողջական վիճակի վերաբերյալ տվյալներ (3 հրապարակում),
- բժիշկների կողմից հոգեմետ դեղերի և թմրամիջոցների նշանակման կարգերի պարզեցմանը (1 հրապարակում),
- թմրամիջոց գործածող անձանց վերաբերյալ վիճակագրությանը (6 հրապարակում),
- Հայաստանի Հանրապետությունում գործող մեթադոնային փոխարինող բուժման կլինիկական ուղեցույցի՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցներին համապատասխան վերանայման անհրաժեշտությանը (2 հրապարակում),
- ՀԱՊԿ անդամ երկրների գլխավոր թմրաբանների հանդիպմանը (3 հրապարակում),
- թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրվան (1 հրապարակում),
- թմրամիջոց գործածող անձանց շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածության նվազմանը (1 հրապարակում)։

Հարկ է նշել, որ թվարկված վերջին հրապարակման մեջ տեղեկատվություն է տրամադրվում նաև հասարակական կազմակերպության փորձագետի կողմից, ով ՄԻԱՎ-ի տարածվածության նվազումը պայմանավորում է Հայաստանի Հանրապետությունում դեզոմորֆինի օգտագործման աճով. դեզոմորֆին ներարկվող մարդկանց կյանքի միջին տևողությունը 6 ամսից մինչև 2 տարի է և նրանց մեծ մասը պարզապես չի ապրում մինչև այն պահը, երբ կարող է ՄԻԱՎ ախտորոշվել։ Միաժամանակ փորձագետը անդրադառնում է թմրանյութեր օգտագործող մարդկանց շրջանում ՄԻԱՎ-ով հիվանդացածությունը նվազեցնելու միջազգային չափորոշիչներին Հայաստանի Հանրապետությունում գործող ծրագրերի անհամապատասխանությանը։ Ըստ նրա՝ կանխարգելիչ ծրագրերը միջազգային չափորոշիչների համաձայն՝ պետք է ընդգրկեն նշված խմբի մարդկանց նվազագույնը 60 տոկոսին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում 60 տոկոսը չեն

ընդգրկվում, նաև մեթադոնային փոխարինող բուժման ծրագիրը պետք է ներառի նվազագույնը 20 տոկոսին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում ներառում է միայն 3-4 տոկոսը։

Երևանի Բաղրամյան փողոցում ինքնահրկիզված Քաջիկ Գրիգորյանի իրավունքների պաշտպանության նպատակով անձի անձնական տվյալների հրապարակման խնդրին են անդրադարձել հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը։

Հարկ է անդրադառնալ նաև, որ տեղական հասարակական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկատվությամբ ևս մեկ հրապարակում անդրադառնում է բժշկական գաղտնիքի պահպանման խնդրին։ Հասարակական կազմակերպության ներկայացուցիչը մասնավորապես նշում է, որ մեթադոնային փոխարինող բուժման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներում լուրջ բացթողումներ կան, որոնք բերում են պացիենտի իրավունքի համատարած խախտումներին։

Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացման շրջանակներում առկա խնդիրները ներկայացված են նաև այլ հրապարակման մեջ, որում ներկայացված տեղեկատվությունը ձեռք է բերվել հասարակական կազմակերպության, թմրաբանի և թմրամիջոց գործածող անձի կողմից։ Այս հրապարակումը փաստացի անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոց գործածող անձանց առողջապահական խնդիրներին։

Քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը ևս զանգվածային լրատվության միջոցով տարածված հրապարակման մեջ անդրադարձել է թմրամիջոց գործածող անձանց (այդ թվում՝ մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված անձանց) խնդիրներին։

Հոգեբանի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակված նյութերում խոսվում է թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ հասարակության համարժեք վերաբերմունքի կարևորությանը, որպեսզի վերջիններս չխուսափեն դիմել առողջապահական ծառայություններին։

Այսպիսով, իրավապահ մարմինների ինտերնետային էջերում կամ վերջիններիս տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումները կազմում են դիտարկված հրապարակումների մեծամասնությունը՝ մոտ 54 տոկոսը։ Այս հրապարակումները առավելապես վերաբերում են թմրամիջոցների և թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող անհատների, մարդկանց խմբերի հայտնաբերմանը և հիմնականում անդրադառնում են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերին։ Նշված հրապարակումների համեմատությամբ աննշան են թմրամիջոց գործածող անձանց, նրանց բուժման, վերականգնման բնագավառներում առկա խնդիրները ներկայացնող հրապարակումների թիվը (կազմում են դիտարկված հրապարակումների մոտ 1 տոկոսը)։ Հատկանշական է, որ թմրամիջոց գործածող անձանց, նրանց բուժման, վերականգնման բնագավառներում առկա խնդիրներին առավել շատ անդրադարձել են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։

Չնայած նրան, որ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը 2016 թ. նվազել է, իսկ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հրապարակումների թվի աճ է գրանցվել, այնուամենայնիվ կարող ենք կրկին անգամ արձանագրել պետության կողմից թմրամիջոցների բնագավառում առողջապահական, սոցիալ-վերականգնողական խնդիրների վերաբերյալ պատշաճ ուշադրության բացակայության և կիրառվող քաղաքականության մեջ քրեական հետապնդման բնույթի գործողությունների գերակայության մասին:

## Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա նրանց ազդեցությունը

### Հրապարակումների բնույթը

2016 թ. ուսումնասիրված 1505 հրապարակումներից 1056-ը վերաբերում են քրեադատավարական գործողությունների իրականացմանը, այսինքն պարունակում են տեղեկություններ թմրամիջոցների ապօրինի շրջանառության բնագավառում քրեական հետապնդման, բերման ենթարկելու, ձերբակալելու, նախաքննության, դատաքննության, պատիժ նշանակելու, հարկադրանքի ու պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին:

1505 հրապարակումներից 449-ում ներկայացված են ընդհանուր բնույթի տեղեկություններ (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3-ից կարող ենք տեսնել, որ 2016 թ. հրապարակված քրեադատավարական գործողությունների վերաբերյալ նյութերը կազմել են հրապարակումների գերակշիռ մասը՝ մոտ 70 տոկոսը: Միևնույն ժամանակ, 2016 թ. հավաքագրված քրեադատավարական գործողությունների վերաբերյալ հրապարակումները 2015 թ. համեմատությամբ նվազել են (2016 թ.՝ մոտ 70 տոկոս, 2015 թ. մայիս-դեկտեմբերին՝ մոտ 86 տոկոս): 2011-2016 թթ. հավաքագրված բոլոր հրապարակումների 26 տոկոսն է ընդհանուր բնույթի տեղեկություններ ներկայացրել:

2016 թ. հավաքագրված քրեադատավարական գործողությունների վերաբերյալ 1056 հրապարակումների գերակշիռ մասը՝ մոտ 82 տոկոսը, վերաբերել են թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը՝ պաշտոնատար անձանց և քաղաքացիների մատնանշմամբ, ևս մոտ 5 տոկոսը վերաբերել են թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը՝ առանց կոնկրետ անձանց կամ մարդկանց խմբերի մատնանշման:

Քրեադատավարական գործողությունների վերաբերյալ 2016 թ. հավաքագրված 1056 հրապարակումներից մոտ 6 տոկոսը վերաբերել են թմրամիջոց գործածող անձանց կողմից կատարված հանցագործություններին: Հարկ է արձանագրել, որ 2015 թ. համեմատությամբ 2016 թ. այս հրապարակումների թիվը աճել է գրեթե 7 անգամ:

**Աղյուսակ 3**

**Հրապարակումների դասակարգումը՝ ըստ բովանդակության**

| N | Նյութի բովանդակությունը | 2011-2014 թթ. | | 2015 թ. | | 2016 թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը |
| 1 | Քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ | 1358 | 68 | 1306 | 85.5 | 1056 | 70.2 | 3720 | 74 |
| | *Այդ թվում*[4]՝ | | | | | | | | |
| | Թմրամիջոց գործածող անձանց կողմից կատարված հանցագործություններ | - | - | 9 | 0.6 | 61 | 4.1 | 70 | 1.4 |
| | Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն՝ պաշտոնատար անձանց և քաղաքացիների մատնանշմամբ | - | - | 1109 | 72.6 | 869 | 57.7 | 1978 | 39.3 |
| | Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն՝ առանց կոնկրետ անձանց կամ մարդկանց խմբերի մատնանշման | - | - | 189 | 12.4 | 54 | 3.6 | 243 | 4.8 |
| | Քաղաքացիների նկատմամբ քրեական պատասխանատվության, քրեական հետապնդման և քրեադատավարական այլ գործողությունների մասին նյութեր | 1272 | 93.7 | 1115 | 73 | 952 | 63.3 | 2067 | 41.1 |
| 2 | Ընդհանուր բնույթի տեղեկատվական | 640 | 32 | 221 | 14.5 | 449 | 29.8 | 1310 | 26 |
| **Ընդամենը** | | **1998** | **100** | **1527** | **100** | **1505** | **100** | **5030** | **100** |

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ զանգվածային լրատվության միջոցներով թմրամիջոցների բնագավառի վերաբերյալ առավելապես լուսաբանվում են քրեադատավարական գործողությունների վերաբերյալ տեղեկությունները: Չնայած դրանք 2016թ.-ին 2015 թ.-ի համեմատությամբ նվազել են, այնուամենայնիվ նախորդող մյուս տարիների համեմատ առավել մեծ թիվ են կազմել:

**Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ շարունակվում է պետության պատժողական քաղաքականությունը թմրամիջոցների բնագավառում:**

## Թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա հրապարակումների ունեցած ազդեցությունը

2016 թ. ուսումնասիրված նյութերում թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը այս կամ այն կերպ նպաստող 6 հրապարակումներ կան: Այնուամենայնիվ, սրանով հանդերձ, տարածվել են 12 հրապարակումներ, որոնք նպաստում են թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային բացասական վերաբերմունքի ձևավորմանը (տե՛ս աղյուսակ 4):

[4] *Քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ հրապարակումները, ըստ աղյուսակում նշված խմբերի, դասակարգվել են սկսած 2015 թվականից:*

**Աղյուսակ 4**

**Հրապարակումների դասակարգումը՝ ըստ թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության**

| N | Նյութի բնույթը | 2011-2014 թթ. | | 2015 թ. | | 2016 թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը |
| 1 | Դրական վերաբերմունք ձևավորող | 0 | 0 | 0 | 0 | 6 | 0.4 | 6 | 0.1 |
| 2 | Բացասական վերաբերմունք ձևավորող | 5* | 0.5 | 2 | 0.1 | 12 | 0.8 | 19 | 0.4 |
| 3 | Դրական կամ բացասական վերաբերմունք չձևավորող | 1993 | 99.5 | 1525 | 99.9 | 1487 | 98.8 | 5005 | 99.5 |
| **Ընդամենը** | | **1998** | **100** | **1527** | **100** | **1505** | **100** | **5030** | **100** |

* *Բոլոր 5 հրապարակումները եղել են 2011 թվականին*

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ից, 2011-2016 թթ. ընթացքում դիտարկված ինտերնետային էջերով որպես կանոն տարածվում են հրապարակումներ, որոնք թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունք չեն ձևավորում: Միայն 2016 թ. առանձնացվել են 6 հրապարակումներ, որոնք նպաստում են դրական վերաբերմունքի ձևավորմանը: Բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումներ արձանագրվել են 2011 թ.՝ 5 հատ, 2015 թ.՝ 2 հատ և 2016 թ.՝ 12 հատ: Կարող ենք նկատել, որ 2016 թ. նախորդ տարիների համեմատությամբ աչքի է ընկել ոչ միայն դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող, այլև բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների աճով:

Դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումները հիմնականում անդրադարձել են թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ անհարկի խարանին ու կարծրատիպերին, որի պատճառով վերջիններս չեն ընկալվում որպես հասարակության լիիրավ անդամներ, ինչպես նաև թմրամիջոց գործածող անձանց կյանքի պատմություններին:

Բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումներում հակառակը՝ շեշտվում է թմրամիջոց գործածող անձանց անպիտանությունը, անարժանությունը:

Բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող 12 հրապարակումներից բացի, 2016 թ. ուսումնասիրված 1505 հրապարակումներից 143-ում օգտագործվել է կարծրատիպային «թմրամոլ» կամ «թմրամոլություն» բառերը, որոնք նույնպես կարող են հանգեցնել բացասական վերաբերմունքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Հարկ է նշել, որ 2015 թ. ուսումնասիրված 1527 հրապարակումներից 95-ն էին կարծրատիպային բառեր պարունակում, ուստի կարող ենք արձանագրել նաև կարծրատիպային բառերի օգտագործմամբ հրապարակումների թվի աճ:

**Այսպիսով, զանգվածային լրատվության միջոցներով թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամիջոցներին առնչվող այլ հրապարակումներում փոքր թիվ են կազմում թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ դրական**

**վերաբերմունք ձևավորող հրապարակումները, մինչդեռ բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները զգալի թիվ են կազմում: Ուստի, չնայած 2016 թվականի ընթացքում դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումների առկայությանը, կարող ենք պնդել, որ թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ բացասական կարծրատիպերի և խարանի ամրապնդմանը նպաստող վերաբերմունքի դրսևորումները շարունակում են գերակայել, իսկ հասարակության բացասական վերաբերմունքի հաղթահարման ուղղությամբ աշխատանքները նկատելի չեն:**

## Թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա հրապարակումների ունեցած ազդեցությունը

2016 թ. հավաքագրված 1505 հրապարակումներից 75-ը բացասական վերաբերմունք են ձևավորում թմրամիջոցների ու դրանց՝ ոչ բժշկական նպատակներով գործածման նկատմամբ, 20-ը՝ դրական (հրապարակումների վիճակագրությունը, ըստ թմրամիջոցների ու դրանց՝ ոչ բժշկական նպատակներով գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության, ներկայացված է աղյուսակ 5-ում):

Թմրամիջոցների և դրանց՝ ոչ բժշկական նպատակներով գործածման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումները վերաբերել են թմրամիջոց օգտագործող կամ գովազդող հայտնի անձանց, թմրամիջոցների բուժիչ հատկություններին և անգամ տնային պայմաններում դրանց պատրաստման ու գործածման օգտակարությանը: Բացասական վերաբերմունք ձևավորող նյութերը վերաբերել են թմրամիջոցների և դրանց գործածման բացասական հետևանքներին, ընդհուպ օգտագործման հետևանքով մարդկանց մահերին:

**Աղյուսակ 5**

**Հրապարակումների դասակարգումը՝ ըստ թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության**

| N | Նյութի բնույթը | 2015 թ. | | 2016 թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը |
| 1 | Դրական վերաբերմունք ձևավորող | 13 | 0.9 | 20 | 1.3 | 33 | 1.1 |
| 2 | Բացասական վերաբերմունք ձևավորող | 47 | 3.1 | 75 | 5 | 122 | 4 |
| 3 | Դրական կամ բացասական վերաբերմունք չձևավորող | 1467 | 96.1 | 1410 | 93.7 | 2877 | 94.9 |
| **Ընդամենը** | | **1527** | **100** | **1505** | **100** | **3032** | **100** |

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 5-ից, 2016 թ.-ին 2015 թ.-ի համեմատությամբ թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ ինչպես բացասական, այնպես էլ դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումների թիվն ավելացել է (դրական վերաբերմունք ձևավորող

հրապարակումները 0.4 տոկոսով, բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումները՝ 1.9 տոկոսով)։ Չնայած բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումները դրականի համեմատությամբ ավելացել են 1.5 տոկոսով, այնուամենայնիվ դեռևս մտահոգիչ է մնում թմրամիջոցների և դրանց՝ ոչ բժշկական նպատակներով գործածման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումների աճը և առկայությունն առհասարակ։

2016 թ. հարապարակումների գերակշիռ մասը չեզոք բնույթի է, այսինքն ակնհայտ դրական կամ բացասական վերաբերմունք չի ձևավորում։

Այսպիսով, կարող ենք արձանագրել թմրամիջոցների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության նկատմամբ բացասական և դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումների աճ 2016 թ.-ին 2015 թ.-ի համեմատ։ Մինչդեռ նման դինամիկան թմրամիջոցների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում ներկա բարդ իրավիճակը կարող է առավել ծայրահեղացնել։

## Հրապարակված նյութերում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը

2016 թ. ուսումնասիրված 1505 հրապարակումներից 24-ը տեղեկություններ են պարունակել ՀՀ-ում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, իսկ հրապարակումներից 243-ում արձանագրվել է անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտում։

24 հրապարակումներից 4-ը (1 դեպք) վերաբերել են անձի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի հնարավոր խախտմանը, մյուս 20 հրապարակումները (9 դեպք)՝ արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումներին, որոնցից 2-ը (1 դեպք)՝ նաև անձի ազատության իրավունքի հնարավոր խախտմանը։ Արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումների մասին հրապարակումները վերաբերել են ոստիկանության աշխատակցի կողմից կամ նրա հրահանգով անձի «գրպանը թմրամիջոց գցելուն», անձի կողմից տրված բացատրության հիման վրա կեղծ արձանագրություն կազմելուն, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը պաշտոնական լիազորությունների չարաշահմամբ կոծկելուն, քրեական գործով նյութերի նախապատրաստման շրջանակներում կեղծիքների թույլատրմանը։ Այս հրապարակումներից երկուսում տեղեկատվության տրամադրող է հանդիսացել զանգվածային լրատվության միջոցը, իսկ մյուս 18-ի դեպքում՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը։

Հարկ է նշել, որ 2015 թ. մարդու իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ 30 հրապարակում է եղել (8 դեպքի մասին), որոնք բոլորը վերաբերել են արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումներին։ 2015 թ. նշված արդար դատաքննության հնարավոր խախտումների դեպքերից մեկի մասին 2016 թ. ևս 3 հրապարակմամբ է տեղեկատվություն

տրամադրվել, որոնցից վերջինով տեղեկացվել է, որ ոստիկանության աշխատակցի կողմից պաշտոնական լիազորությունների չարաշահման վերաբերյալ սուտ մատնություն է եղել։

Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտում արձանագրված 243-ում հրապարակումներում, ինչպես և նախորդ տարիներին, տրամադրվող տեղեկատվության միջոցով հնարավոր է նույնականացնել անձանց։ Միևնույն ժամանակ որևէ նշում չի արվում այդ տվյալների հրապարակման թույլտվության մասին, որով պարզ կլիներ տվյալների հրապարակման իրավաչափ նպատակը (անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումների վիճակագրությունը ներկայացված է աղյուսակ 6-ում)։

**Աղյուսակ 6**

**Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումները**

**2011-2016 թթ.**

| Տարեթիվը | Հրապարակումների թիվը | Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների | |
|---|---|---|---|
| | | Թիվը | Տոկոսը |
| 2011 | 957 | 156 | 16 |
| 2012 | 401 | 41 | 10 |
| 2013 | 365 | 127 | 35 |
| 2014 | 275 | 7 | 3 |
| 2015 | 1527 | 165 | 11 |
| 2016 | 1505 | 243 | 16 |
| **Ընդամենը** | **3525** | **496** | **14** |

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 6-ից, անձնական տվյալների պաշտպանության իրավունքը առավել շատ խախտվել է 2013 թ. (35 տոկոս), իսկ առավել քիչ՝ 2014 թ. (3 տոկոս)։ 2016 թ. անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտում արձանագրվել է 1505 հրապարակումներից 243-ում (16 տոկոս)։

2016 թ. 243 հրապարակումներում անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող տեղեկություններ են տրամադրվել 79 դեպքի վերաբերյալ՝ խախտելով 142 անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, որոնցից 81-ի վերաբերյալ տեղեկացվել է, որ թմրամիջոց գործածող է կամ կասկածվում է թմրամիջոց գործածելու մեջ, ուստի կարող ենք նշել, որ այս դեպքերում չի ապահովվել նաև անձի առողջության վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը։

Փաստացի, 2016 թ.-ին 2015 թ. համեմատությամբ ոչ միայն հրապարակումների թիվն է աճել, որոնցով խախտվում են անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, այլև այն անձանց թիվը, ում՝ նշված իրավունքը խախտվել է։

Անձի անձնական տվյալներ պարունակող 243 նյութերից 49-ը հրապարակվել են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային էջով, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության ինտերնետային էջով, 194-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Զանգվածային լրատվության միջոցներով տարածված 194 նյութերից 167-ը հրապարակվել է պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա (131 հրապարակում՝ ՀՀ ոստիկանության, 4՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության, 19՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, 10՝ ՀՀ քննչական կոմիտեի, 3՝ առողջապահական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկատվություն), և ևս 28-ը՝ զանգվածային լրատվության և փաստաբանների/իրավաբանների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա[5]:

Միևնույն ժամանակ հավաքագրված նյութերից 428-ը այնպիսի տեղեկատվություն են պարունակել, որոնք անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ են պարունակում և հնարավորություն են տալիս որոշ դեպքերում նաև անձանց նույնականացնել, ինչպես օրինակ՝ անձի անունը, ազգանվան առաջին տառը, ծննդյան ամսաթիվը, բնակության վայրը:

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող 428 հրապարակումները վերաբերել են 177 դեպքի և տեղեկատվություն են պարունակել 278 անձանց մասին, այդ թվում՝ թմրամիջոց գործածող 155 անձի վերաբերյալ (անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող հրապարակումների դասակարգումը ներկայացված է աղյուսակ 7-ում):

**Աղյուսակ 7**

**Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող հրապարակումների դասակարգումն ըստ 2015-2016 թթ.**

| Հրապարակման տեսակը | 2015 թ. | | 2016 թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը | Թիվը | Տոկոսը |
| Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող հրապարակումներ | 773 | 50.6 | 428 | 28.4 | 1201 | 39.6 |
| Այդ թվում՝ | | | | | | |
| Անձանց նույնականացնելու վտանգներ | 314 | 20.6 | 278 | 18.5 | 592 | 19.5 |
| Այդ թվում՝ | | | | | | |
| Թմրամիջոց գործածող անձանց նույնականացնելու վտանգներ | 133 | 8.7 | 155 | 10.3 | 288 | 9.5 |
| **Ընդամենը** | **1527** | **100** | **1505** | **100** | **3032** | **100** |

[5] *Զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումներից մեկում տեղեկատվություն տրամադրվել է միաժամանակ ՀՀ ոստիկանության և զանգվածային լրատվության միջոցի կողմից:*

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 7-ից, 2016 թ. անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող հրապարակումների թիվը 2015 թ. համեմատությամբ նվազել է, միաժամանակ նվազել է նաև այդ հրապարակումներում նշված կոնկրետ անձանց թիվը, ում նույնականացնելու վտանգ կա: Այնուամենայնիվ 2016 թ. սրան զուգահեռ աճել է թմրամիջոց գործածող անձանց նույնականացնելու վտանգը:

**Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ շարունակվում է ինտերնետային էջերով անձանց, այդ թվում՝ թմրամիջոց գործածող, անձնական տվյալների հրապարակման դեպքերը՝ խախտելով անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Ընդ որում անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման դեպքերի աճ է գրանցվում:**

**Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված պաշտոնական լիազորությունների չարաշահման վերաբերյալ գործերի քննության մասին տեղեկատվություն տրամադրող հրապարակումների առկայությունը վկայում է թմրամիջոց գործածող անձանց խոցելիության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության բնագավառում պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիների նկատմամբ ճնշումների գործադրման վտանգների մասին:**

## Ամփոփում

2016 թ. թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամիջոցների մասին հավաքագրվել և դիտարկվել է 1505 հրապարակում, որոնցից 248-ը պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով, 1257-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Հրապարակումների գերակշիռ մասը վերաբերել է թմրամիջոցների և թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող անհատների, մարդկանց խմբերի հայտնաբերմանը և նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերին: Միևնույն ժամանակ եզակի են թմրամիջոց գործածող անձանց՝ առողջապահական, սոցիալական, իրավական խնդիրների վերաբերյալ հրապարակումները:

Զանգվածային լրատվության միջոցներով թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող հրապարակումներում առկա են թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ բացասական կարծրատիպերի և խարանի ամրապնդմանը նպաստող տեղեկություններ, ձևակերպումներ, ինչը լուրջ մարտահրավեր է այս անձանց իրավունքների նկատմամբ: Թմրամիջոց գործածող անձանց իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը խոչընդոտող, այդ թվում՝ թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ խտրականության դրսևորման պատճառ հանդիսացող կարծրատիպերի ու խարանի դեմ աշխատանքները թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին ուղղված ծավալուն աշխատանքների

համեմատությամբ նկատելի չեն: Առկա են նաև հրապարակումներ, որոնք խրախուսում են ոչ բժշկական նպատակներով թմրամիջոցների գործածմանը:

2016 թ. հավաքագրված հրապարակումներում առկա են անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման դեպքեր (16 տոկոսում). հրապարակված անձնական տվյալների միջոցով հնարավոր է նույնականացնել մարդկանց:

**Բացահայտված խնդիրների լուծման նպատակով ՀՀ պետական մարմիններին կրկին առաջարկում ենք՝**

1. զերծ մնալ անձնական այնպիսի տվյալների հրապարակումից, որով հնարավոր է նույնականացնել անձին,
2. թմրամիջոց գործածող անձանց վերաբերյալ հրապարակումներում ցուցաբերել զգուշություն՝ հաշվի առնելով վերջիններիս իրավական խոցելիությունը,
3. թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ նյութերում տեղեկատվություն տրամադրել ոչ բժշկական նպատակներով թմրամիջոցների գործածման բացասական հետևանքների վերաբերյալ,
4. իրազեկել թմրամիջոց գործածող անձանց իրավական, առողջապահական և սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ պետության կողմից իրականացվող գործողությունների մասին:

**Զանգվածային լրատվության միջոցներին հորդորում ենք՝**

1. զերծ մնալ անձնական այնպիսի տվյալների հրապարակումից, որով հնարավոր է նույնականացնել նրանց (երբ բացակայում է դրա օրինաչափ նպատակը՝ անկախ նրանից, թե ումից է լրատվամիջոցը ձեռք բերել տեղեկատվությունը),
2. թմրամիջոց գործածող անձանց վերաբերյալ հրապարակումներում ցուցաբերել զգուշություն՝ հաշվի առնելով վերջիններիս իրավական խոցելիությունը,
3. նպաստել թմրամիջոց գործածող անձանց իրավական, առողջապահական և սոցիալական խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը,
4. նպաստել ոչ բժշկական նպատակներով թմրամիջոցների գործածման կանխարգելմանը՝
   - թմրամիջոցների բացասական ազդեցության վերաբերյալ իրականացնելով լայն իրազեկում,
   - զերծ մնալով թմրամիջոցի գործածումը խրախուսող հրապարակումներից:

## Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վերաբերյալ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թ. որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թ. և վերագրանցվել է 2005 թ. ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը որդեգրել է մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ համալիր մոտեցում, որն ուղղված է ինչպես իրավունքների խախտման կանխարգելմանը, այնպես էլ խախտված իրավունքների վերականգնմանը:

Կազմակերպությունը տրամադրում է անվճար իրավական աջակցություն, իրականացնում է մարդու իրավունքների մշտադիտարկում, օրենսդրական նախաձեռնություն ու լոբբինգ, հասարակության իրազեկմանն ուղղված միջոցառումներ:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի գործունեության կարևոր ուղղություններից է թմրամիջոց գործածող անձանց իրավունքների պաշտպանությունը: Տվյալ խմբի իրավունքների պաշտպանության նպատակով Կազմակերպությունը տրամադրում է անվճար իրավաբանական խորհրդատվություն և իրականացնում դատական ներկայացուցչություն, իրականացնում է մարդու իրավունքների մշտադիտարկում նարկոլոգիական բուժհաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում, իրականացնում է ԶԼՄ մշտադիտարկում, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ազգային ծրագրերի իրականացման վերլուծություն, հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնություններով և պրակտիկայի փոփոխությանն ուղղված առաջարկություններով:

Իրականացված մշտադիտարկումների, վերլուծությունների արդյունքում պատրաստվել են զեկույցներ, որոնք հրապարակվել են Կազմակերպության ինտերնետային էջում[6]:

[6] *Տեղեկանք պետական մարմինների պաշտոնական և զանգվածային լրատվության այլ միջոցների ինտերնետային էջերով 2015 թ. մայիս-դեկտեմբեր ամսիներին թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և թմրամիջոցներին առնչվող այլ նյութերի մշտադիտարկման վերաբերյալ* http://hcav.am/wp-content/uploads/2016/04/թմր-տեղեկանք-03.03.2016-երկրորդ.pdf

*Թմրամիջոցներ գործածող անձանց նկատմամբ իրականացվող քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանում: Հիմնական թերությունները և բարեփոխումների անհրաժեշտությունը*

http://hcav.am/wp-content/uploads/2016/02/Զեկույց-ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ-17.02.2016.pdf

*«Մարդու իրավունքների վիճակը Հայաստանի Հանրապետության նարկոլոգիական բուժհաստատություններում 2013 թ.» զեկույց* http://hcav.am/wpcontent/uploads/2014/11/narko_report-4.pdf

*Զեկույց թմրամիջոցներ գործածող անձանց արդար դատաքննության իրավունքի պաշտպանվածության վիճակը (Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում իրականացված քրեական գործերի ուսումնասիրության հիման վրա)* http://hcav.am/wpcontent/uploads/2013/07/tmramijoc_book-5.pdf

*«Հոգեկան և նարկոլոգիական բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ֆինանսավորման գնահատում» զեկույց.* http://hcav.am/wpcontent/uploads/2013/07/zekuyc_book-11.pdf

*Պացիենտների իրավունքների վիճակի վերլուծություն* http://hcav.am/wpcontent/uploads/2010/12/Վերլուծություն.pdf